ձեռքն են հասել։ Դրանց նիւթը իւրացրել էր Գրիգոր Տաթևացին մասամբ իւր ուսուցիչ Յոհան Որոտնեցուց և մասամբ իւր աշխատանքի պտուղն էր. այսպէս են Պորփիւրի, Արիստոտէլի Ստորոգութեանց, Պերիարմենիասի Լուծմունքները. իւրն է միայն «Առորս»-ի մեկնութիւնը։ Վերոյիշեալ փիլիսոփայական մեկնութիւնների յիշատակարանից իմանում ենք, որ նա գրել է 1383 թուին «ի խնդրոյ ոմանց նորին աշակերտաց»*։ Տպաւորութիւնը մեծ էր Թովմայի և իւր ընկերների վերայ. «Եւ ապշեցոյց զամենեսին առաւել քան զիմաստունս հելլենացւոց», գրում է նա իւր պատմութեան մէջ։ Երկու տարի Թովման մնաց այնտեղ իւր ընկերների հետ. ապա Տաթևացին ստիպուած եղաւ փախուստ տալ և հաստատուել Մեծոփայ վանքում, հետը բերելով Թովմային և իւր ընկերներին**։ Մեծոփեցիք իրենք են դիմում մեծ վարդապետին վանքում հաստատուելու. «զի ժողովեցան առ նա ամենեքեան քահանայք և տանուտէրք և լալով և աղաչելով արգելեցին», գրում է Սարգիսը իւր յիշատակարանի մէջ***։ Ժամանակի վանահայրը Յովհաննէս Մեծոփեցին էր, Թովմայի մանկութեան ուսուցիչը, որ նոր էր շինել իւր վանքը։ Եկեղեցու նաւակատեաց հանդիսին

---

70. 79. 101. 119. 122։ Նոր Նիւթեր. Ար. 756. 759. (19. 22). Կիրակոս Բանասէր 744. (7.) Թովմա Մեծ. Պատմ. 61. Յակոբ Թոփճեան. Ձեռագրաց Ցուցակ Խաչիկ վ.ի Դադեան. Վաղարշապատ. 1898. 62. 98.

4. Մելքիսէթ վարդապետ. Տես Նոտարք 61. 70.

5. Մարգարէ վարդապետ. Նոտարք 65. Մեծոփ. Պատ. 52.

6. Ղազար Աղթամարցին. Նոր Նիւթեր. Ար. 760. (23)։ Թովմ. Մեծոփ. Պատմ. Լանկ. 44. Նա եւս մասնակից եղաւ 1441 թուի ժողովին. Կոստ. Թովմ. Մեծ. Յիշատ. 52.

7. Սարգիս Սալնապատեցի, որի յիշատակարանը ՊԾԸ (=1409) թուին յիշեցինք. Նոր Նիւթեր. Ար. 750. (13)։ Սա եւս մասնակից եղաւ 1441 թուի ժողովին եւ ջերմ պաշտպան էր Կիրակոս Վիրապեցու. Կոստ. Թովմա Մեծ. Յիշատ. 52. 81. Առաքել Դաւրիժեցի. Պատմ. Վաղարշ. 1896. 628. Համեմ. Փիրղալ. Նոտարք 130.

8. Յակոբ վարդապետը հաւանօրէն Ովսաննացին է, որ Թովմայի հետ աշակերտել էր Յովհաննէս Մեծոփեցուն եւ ապա Տաթեւացուն. նա նահատակուեցաւ 1428 թուին քրդերի ձեռքով։ Սորա քրոջ որդին էր Տ. Ած՟ատուր եպիսկոպոս, «քաջ քարտուղար», որ գրեց Մկրտիչ Նաղաշի կեանքը։ Թովմա Մեծոփ. Պատմ. 43. 52. 61. Ձեռ. Մատ. Ս. Էջմ. Գ. № 276/318. 242ա.

* Մեր մատ. Ձեռ. № 1834/1921.

** Մեծոփ. Պատմ. 51/2։

*** Նոր Նիւթեր. Ար. 731. (14)։